Հ/17.3/17/33

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ N ԵՔ-ԴՄ- 07

ք. Երևան 16 նոյեմբերի 2021 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վահրամ Գասպարյանի (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից «Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ-ն, ի դեմս կազմակերպության ղեկավար Գրիգոր Երիցյանի այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1115 Երիտասարդության ծրագիր» ծրագրի «11001 Երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրեր և միջոցառումներ» միջոցառումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N 1937-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2215-Ն որոշումը (այսուհետ որոշումներ), Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հոկտեմբերի 10-ի «Կազմակերպությունների ցանկը հաստատելու մասին» N 1692-Ա/2 հրամանը, Հայաստանի Հանրապետության ԿԳՄՍ նախարարության կողմից դրամաշնորհների հատկացման մրցույթի հանձնաժողովի 24.09.2021թ. N 04/21 արձանագրությունը «Եղի՛ր տեղեկացված. մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբեռգրագիտության խթանում Տավուշի, Գեղարքունիքի և Սյունիքի երիտասարդների շրջանում» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1 Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5.1 կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել 1920.0 հազար (մեկ միլիոն ինը հարյուր քսան հազար) ՀՀ դրամ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված N 2-ի, իսկ

կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշումներով և սույն պայմանագրով սահմանված կարգով:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. Որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. Առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. Սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. Իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. Կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. Իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. Իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. Իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. Կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. Սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.6. Սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.7. Պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.8. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.9. Ավարտված միջոցառման փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը ներկայացնել պետական մարմին, նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպությունում և վերջինս պատասխանատվություն է կրում դրանց իսկության համար:

2.4.10. Պայմանագրով սահմանված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարվելու դեպքում, դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 25-ը:

2.4.11. Անհրաժեշտության դեպքում Պայմանագրի նախահաշվով նախատեսված ծախսային ուղղություններում իրականացնել յուրաքանչյուր ծախսային ուղղության գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1 Պայմանագրի արդյունքն ընդունվում է պետական մարմնի և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը և հաշվետվությունը:

4.2 Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, պետական մարմինը պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3 Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում պետական մարմինը չի ընդունում պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պետական մարմինը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Պայմանագրի 1.1 կետում սահմանված գումարի 80%-ը կատարողին հատկացվում է Պայմանագիրը կնքվելուց հետո, իսկ 20%-ը Պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ 5 բանկային օրվա ընթացքում:

5.2. Համաձայն «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2021 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Պայմանագրի N 1 հավելվածում նշված ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում կազմակերպությունից

գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն պետական մարմնի կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3. Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4. Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

6.5. Պետական մարմնի կողմից պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման և հաշվետվությունների ընդունման ժամկետը մինչև 2021 թ. դեկտեմբերի 15-ն է:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա

կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

9.2. այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պետական մարմինը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ պետական մարմինը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պետական մարմնի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.3. Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

9.4. Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական՝ www.escs.am կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը պետական մարմինը այն ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.5. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.6. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.7. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Երևան, Վ. Սարգսյան 3 Կառավարական տուն N 2 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732 Պատվիրատուի ստորագրությունը Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ **Վահրամ Գասպարյան** /ստորագրություն/ Կ. Տ.	«Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ ք.Երևան, 0019 Բաղրամյան 45 apy@apy.am Հայէկոնոմբանկ ԲԲԸ, Սպանդարյան մ/ճ, Հ/Հ 163048802066 ,ՀՎՀՀ 02247522 ՀԿ-ի ղեկավար՝ **Գրիգոր Երիցյան** /ստորագրություն/ Կ.Տ.

Հավելված 1
2021թ. հոկտեմբեր 15-ին
կնքված N ԵՔ-ԴՄ-07 պայմանագրի

«Եղի՛ր տեղեկացված. մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբեռգրագիտության խթանում Տավուշի, Գեղարքունիքի և Սյունիքի երիտասարդների շրջանում» դրամաշնորհային ծրագրի

Ծրագրի նկարագրություն Հիմնախնդրի և կարիքի հիմնավորում

Կեղծ, շահարկվող լուրերը դարձել են հայաստանյան առցանց լրատվամիջոցների և մեդիա դաշտի խնդիրը: Ապատեղեկատվությունը, ինչպես նաև կեղծ, ոչ հավաստի լուրերը օգտագործվում են մտադրաբար հանրությանը մոլորեցնելու և հասարակական կարծիքի վրա ազդելու համար՝ պառակտելով հասարակությունը, բաժանելով հակառակորդ թևերի: Համացանցից և առցանց հարթակներից օգտվողների մեծ մասը 16-35 տարեկան երիտասարդ անձինք են:

Հայաստանում այս պահին երիտասարդները ներկայացնում են հասարակության ամենակտիվ և նախաձեռնող խումբը, որի գործունեությունը կապված է ոչ միայն ներկայի խնդիրների լուծման ու կյանքի բարելավման հետ, այլ նաև իրենից ներկայացնում է ապագա հասարակական նորմերի ձևավորման հենասյունը: Երիտասարդների ինքնակազմակերպումը և ինքնարտահայտումը նաև մեծապես կախված է նրանց տեղեկացվածությունից: Որքան ավելի իրազեկ է երիտասարդը, այդքան ավելի հեշտ է կարողանում ինքնարտահայտվել, սակայն այսօր շատ երիտասարդներ ունեն նաև տեղեկատվության ստացման, կիրառման և տարածման հետ կապված խնդիրներ: Շատ կարևոր է, որ երիտասարդները՝ հատկապես մարզերում բնակվող երիտասարդները, լինեն գրագետ մեդիա սպառողներ և կարողանան իրենց գիտելիքները ներդնել սեփական համայնքներում և հասակակիցների շրջանում:

Առաջարկվող ծրագրի միջոցով մենք նպատակ ունենք ներգրավելու հենց Սյունիքի, Գեղարքունիքի և Տավուշի մարզերում բնակվող երիտասարդներին, քանի որ այս 3 մարզերը առանձնանում են քաղաքացիական հասարակության կառույցների սակավությամբ և դրանցում երիտասարդների մասնակցության պասիվությամբ, ոչ-ֆորմալ կրթական հնարավորությունների առավել քիչ հասանելիությամբ:

Չնայած որ այս մարզերում ապրող երիտասարդները առօրյայում հաճախ են օգտվում էլեկտրոնային սարքավորումների, հեռախոսների և համակարգիչների միջոցով սոցիալական հարթակներից, քչերն են տիրապետում լրատվական դաշտում տեղեկատվության զտմանը, տարբեր թվային գործիքների օգտագործման ձևերին և իրենց առցանց տվյալների պաշտպանության ձևերին:

Պատերազմից հետո այս 3 մարզերը դառնալով սահմանամերձ հաճախ են թիրախավորվում հակառակորդի կողմից, այդ իսկ պատճառով հատկապես այս մարզերի երիտասարդները կարիքը ունեն իրենց կարողությունները զարգացնել կիբեռանվտանգության և թվային գրագիտության ոլորտներում:

Ծրագրի նպատակն է ***18-30 տարեկան մարզաբնակ երիտասարդների շրջանում բարելավել քննադատական մտածողությունը և քաղաքացիական գիտակցությունը, խրախուսել երիտասարդների կողմից սոցիալական մեդիայի պատասխանատու սպառումը***, հատկապես ԿՈՎԻԴ-19 համավարակի, հետպատերազմյան քաղաքական, սոցիալ-տնտեսական ճգնաժամային իրականության համատեքստում և արտահերթ խորհրդարանական ընտրություններից հետո ներկայումս ձևավորված համատեքստում:

«Հայ առաջադեմ երիտասարդություն» հասարակական կազմակերպությունն արդեն 12 տարի է, ինչ կրթական ծրագրեր է իրականացնում Հայաստանի բոլոր մարզերում և այս տարի կազմակերպության ռազմավարական առաջնայնություններից մեկը սահմանամերձ 3 մարզերի երիտասարդության հետ աշխատանքն է, նրանց՝ կազմակերպության տարբեր ծրագրերում և աշխատանքներում ներգրավելը:

Կազմակերպության փորձառությունը

«Հայ առաջադեմ երիտասարդություն» հասարակական կազմակերպությունը ստեղծվել է 2009 թվականին՝ նպատակ ունենալով ներգրավել երիտասարդներին ժողովրդավարական պետության կառուցման գործում, նպաստել երիտասարդների ինքնազարգացմանը, ակտիվ մասնակցությանը, կարողությունների և գիտելիքների զարգացմանը և աջակցել երիտասարդների ներգրավվածությանը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում: Կազմակերպության հիմնական նպատակն է ներգրավել երիտասարդներին հասարակական, քաղաքական, քաղաքացիական և տնտեսական կյանքում, ակտիվացնել երիտասարդներին քաղաքացիական հասարակության կայացման գործում և նպաստել Հայաստանում ոչ ֆորմալ կրթության և կամավորության մշակույթի զարգացմանը:

Իր տեղական և միջազգային կրթական ծրագրերի միջոցով կազմակերպությունը հարյուրավոր երիտասարդների համար ստեղծում է ինքնազարգացման և կատարելագործման հնարավորություններ: Կազմակերպության տեսլականն է ձևավորել հասարակություն, որտեղ երիտասարդներն ունեն ակտիվ մասնակցություն ժողովրդավարական գործընթացներին և որոշումների կայացմանը, քաղաքացիական հասարակությունը զարգացած է և հանդիսանում է սոցիալական և քաղաքական փոփոխությունների շարժիչ ուժ: 2014-2020 թվականների ընթացքում ՀԱԵ-ն իրականացրել է ավելի քան 300 տեղական, տարածաշրջանային և միջազգային ծրագրեր՝ ներգրավվելով ավելի քան 50.000 երիտասարդների: Կազմակերպության հիմնական ուղղություններն են ակտիվ քաղաքացիության կրթությունը, երիտասարդների տնտեսական հզորացումը, ակտիվ մասնակցությունն ու քաղաքացիական կրթությունը: ՀԱԵ-ն հատկապես մասնագիտացած է կրթությունից և աշխատաշուկայից դուրս մնացած, մարզերում և սահմանամերձ համայնքներում բնակվող խոցելի երիտասարդների ներգրավվածության մեջ: Իր ընթացիկ ռազմավարական ծրագրի շրջանակներում (2018-2023) ՀԱԵ-ն նպատակ ունի խթանել Հայաստանում երիտասարդ բնակչության զբաղվածության և ինքնազբաղվածության հնարավորությունները՝ դրանով իսկ երիտասարդության շրջանում նվազեցնելով աղքատության, միգրացիայի և «ուղեղի արտահոսքի» բարձր մակարդակը:

ՀԱԵ-ն ծրագրեր է իրականացրել Եվրոպական Միության, ԱՄՆ դեսպանության, Միջազգային զարգացման համագործակցության իսպանական գործակալության, ՄԱԿ-ի, ՄԱՀԾ-ի և այլ միջազգային կառույցների հետ: Անկախ և տարբեր կոնսորցիումների մաս

կազմելով՝ ՀԱԵ-ն 2019-ից 2020 թվականների իրականացրել է մի շարք ծրագրեր, որոնք ընդհանուր գումարը կազմել է շուրջ 1,000,000 եվրո: 2020-2021 թվականներին պատերազմի հետևանքով Լեռնային Ղարաբաղից Հայաստան տեղափոխված քաղաքացիներին աջակցելու նպատակով կազմակերպությունն իրականացրել է տասնյակ ծրագրեր, այդ թվում շուրջ 25.000 մարդասիրական ճգնաժամից տուժած մարդկանց աջակցել է հոգեբանական ծառայությունների, ինչպես նաև սննդի, հիգիենայի պարագաների և հագուստի տրամադրման տեսքով:

Կազմակերպությունն արդեն իսկ ունի մեդիագրագիտության և թվային հաղորդակցության թեմաների շուրջ աշխատելու բազմամյա փորձ: Այս տարիների ընթացքում կազմակերպությունը Եվրոպայի Խորհրդի աջակցությամբ իրականացրել է 3 տեղական ծրագիր՝ ուղղված Երևանում և ՀՀ մարզերում բնակվող երիտասարդության մեդիա կարողությունների հզորացմանը և սեփական մեդիա նախաձեռնությունների իրականացմանը:

Կազմակերպությունն այս ոլորտում վերջին տարիներին իրականացրել է հետևյալ ծրագրերը՝

- *DigiYouth՝խթանելով առցանց ակտիվիզմը, մեդիագրագիտությունը և երիտասարդության թվային մասնակցությունը COVID-19 համավարակի ընթացքում* (Դեկտեմբեր 2021-Մայիս 2022, Եվրոպայի Խորհրդի Եվրոպական երիտասարդական հիմնադրամի աջակցությամբ)

- *Առցանց ակտիվիզմ՝ լսելի դարձնելով երիտասարդների ձայնը COVID-19 համավարակի ընթացքում* (Սեպտեմբեր 2020-Մայիս 2021, Եվրոպայի Խորհրդի Եվրոպական երիտասարդական հիմնադրամի աջակցությամբ)

DigiYouth և Առցանց ակտիվիզմ ծրագրերի նպատակն էր զարգացնել Երևանում ապրող և մարզաբնակ 75 երիտասարդների մասնակիցների թվային կարողությունները և առցանց հաղորդակցության հմտությունները՝ նրանց տրամադրելով անհրաժեշտ գիտելիքներ, հմտություններ և փորձ մեդիագրագիտության, կիբեռանվտանգության, շահերի պաշտպանության ոլորտներում՝ աջակցելով երիտասարդներին բարձրաձայնել սեփական խնդիրները և սկսել հանրային երկխոսություն այդ խնդիրների լուծման համար պատասխանատու գերատեսչությունների հետ:

- *Everyday Activism: Empowering Next Generation of Young Activists in Armenia հանրային արշավների իրականացման 7-օրյա դասընթաց և 3-ամսյա մենթորության մոդուլ երևանաբնակ և մարզաբնակ երիտասարդների համար* (Հունվար-Մայիս 2021, Եվրոպայի Խորհրդի Եվրոպական երիտասարդական հիմնադրամի աջակցությամբ)

Ծրագիրը հնարավորություն տվեց 25 մարզաբնակ երիտասարդների՝ գիտելիքներ ստանալ և զարգացնել իրենց կարողությունները ակտիվիզմի, ջատագովության, հանրային արշավների կազմակերպման՝ հատկապես սոցիալական մեդիա արշավների կազմակերպման ոլորտում, ազատ օգտագործել սոցիալական մեդիա հարթակները գրագետ և կառուցողական հանրային արշավներ կազմակերպելու, դրանք իրականացնելու և համացանցի միջոցով երիտասարդների ձայնը լսելի դարձնելու ոլորտի պատասխանատու անձանց: Ծրագիրը նպաստեց նրանց առաջնորդական, քննադատական մտածողության և առցանց հաղորդակցման

հմտությունների զարգացմանը և տարածք ստեղծեց քննարկելու COVID-19-ով պայմանավորված մարտահրավերները, որոնց բախվում են Հայաստանում ապրող երիտասարդները, լուծման ուղիներ փնտրել և առաջարկների փաթեթ կազմել կառավարության համապատասխան մարմիններին ներկայացնելու համար: Մասնակիցները պրակտիկայում ծանոթացան տարբեր սոցիալական հարթակների յուրահատկություններին և դրանց օգտագործմանը՝ որպես իրենց առօրյա ակտիվիզմի և պայքարի գործիք:

Ծրագրի նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները

Ծրագրի ընդհանուր նպատակն է ***18-30 տարեկան մարզաբնակ երիտասարդների շրջանում բարելավել քննադատական մտածողությունը և քաղաքացիական գիտակցությունը, խրախուսել երիտասարդների կողմից սոցիալական մեդիայի պատասխանատու սպառումը***, հատկապես ԿՈՎԻԴ-19 համավարակի, հետպատերազմյան քաղաքական, սոցիալ-տնտեսական ճգնաժամային իրականության համատեքստում և արտահերթ խորհրդարանական ընտրություններից հետո ներկայումս ձևավորված համատեքստում:

Ծրագիրը հետապնդում է 3 մասնավոր նպատակներ՝

Խնդիր I: Զարգացնել 3 մարզերում՝ Սյունիքում, Գեղարքունիքում և Տավուշում բնակվող 20 երիտասարդների մեդիագրագիտության՝ մեդիայի աշխատանքը հասկանալու, տեղեկատվական դաշտում կողմնորոշվելու, լուրերը վերլուծելու, համեմատելու, ստուգելու գիտելիքներն ու հմտությունները՝ դարձնելով նրանց ավելի գրագետ մեդիա սպառողներ, ովքեր կկարողանան կողմնորոշվել ինֆորմացիոն հոսքերում:

Ակնկալվող արդյունք I: Հայաստանի 3 մարզերում բնակվող 20 մասնակիցներ տեսական և գործնական գիտելիքների միջոցով կզարգացնեն իրենց քննադատական մտածողությունը և կկարողանան գործնականում համեմատել, ստուգել և վերլուծել լրատվական դաշտում հանդիպող ցանկացած փաստ և բովանդակություն: Մասնակիցները կլուրացնեն փաստերի ստուգման հմտությունները, կտարանջատեն կեղծ լուրերը հավաստի լուրերից, կուսումնասիրեն քարոզչական նպատակ հետապնդող հաղորդագրությունների բնույթը և դրանց դեմ պայքարի եղանակները:

Խնդիր II: Խթանել 3 մարզերում բնակվող 20 երիտասարդների կիբեռգրագիտությունը՝փոխանցելով նրանց գիտելիքներ թվային հարթակներում գրագետ կողմնորոշվելու, անձնական տվյալների պաշտպանության և կիբերհանցագործություններին դիմակայելու նպատակով,

Ակնկալվող արդյունք II: Ծրագրի ավարտին մասնակիցները կկարողանան ըստ պատշաճի գնահատել իրենց առցանց տվյալների անվտանգության և ապահովության վտանգները, գաղտնի պահել անձնական տեղեկատվությունը՝ հասկանալով թե ինչու է դա անհրաժեշտ, ինչպես նաև գրանցվելու և համակարգեր մուտք գործելու տվյալները և ճիշտ կերպով դուրս գալ համակարգերից և սարքերից: Մասնակիցները կիմանան սոցիալական ցանցերում հանդիպող խնդիրներից վերականգնվելու եղանակները՝ արդյունավետ կերպով պայքարելով կիբերհանցագործությունների դեմ:

Խնդիր III: Զինել 20 երիտասարդ մասնակիցներին տեղեկատվական արշավների կազմակերպման և իրականացման համար նախատեսված թվային գործիքներով և գիտելիքներով՝ աջակցելով նրանց դասընթացից հետո իրենց գիտելիքները օգտագործել ի նպաստ իրենց համայնքների բնակչության՝ բարձրացնելով իրազեկվածությունը մեդիագրագիտության, փաստերի ստուգման, կեղծ լուրերի դեմ պայքարի և առցանց տվյալների պաշտպանության թեմաների շուրջ:

Ակնկալվող արդյունք III: Ծրագրի ավարտին մասնակիցները կկարողանան իրենց սովորած թվային գործիքների (տեքստային խմբագրիչներ, նկարչական ծրագրեր, նկարների, տեսանյութերի, երաժշտության խմբագրիչներ, սիմուլյատորներ, համակարգչային դիզայնի կամ հրատարակչական ծրագրեր) միջոցով նախաձեռնել և իրականացնել առնվազն 3 տեղեկատվական և իրազեկման արշավներ՝ ուղղված իրենց համայնքներում մեդիագրագիտությանն ու կիբերգրագիտությանը՝ տարածելով իրենց փորձառությունը մարզի հասակակից երիտասարդների, երիտասարդական կենտրոնների աշխատակիցների և բնակչության այլ խմբերի շրջանում:

Գործողություններ

Ծրագիրը նախատեսում է 3 հիմնական գործողություններ՝

- **Մեկշաբաթյա դասընթաց**, որն իր շուրջը կհամախմբի Տավուշի, Գեղարքունիքի և Սյունիքի խոշորացված համայնքներում և սահմանամերձ գյուղական բնակավայրերում ապրող 18-30 տարեկան 20 երիտասարդների: Դասընթացի ընթացքում մասնակիցները ոչ-ֆորմալ կրթական գործիքակազմի, ինտերակտիվ դասընթացների և 2 ուսումնական այցերի միջոցով կստանան գիտելիքներ և համապատասխան փորձառություն մեդիագրագիտության, փաստերի ստուգման, անձնական տվյալների պաշտպանության, կիբեռանվտանգության, սոցիալական մեդիայից գրագետ օգտվելու և ժամանակակից թվային գործիքների օգտագործման ձևերի, ինչպես նաև տեղեկատվական արշավների կազմակերպման ոլորտներում:

- **Առցանց մենթորության 2-ամսյա փուլ**, որի շրջանակներում մենթորների աջակցությամբ մասնակիցները ստացած գիտելիքներով իրենց համայնքներում կսկսեն իրականացնել իրենց սեփական մեդիագրագիտությանն ուղղված նախագծերը՝ տեղեկատվական կամ իրազեկման արշավները: 2 ամսվա ընթացքում մասնակիցները հնարավորություն կստանան իրենց զարգացրած կարողություններն ու գիտելիքները բերել գործնական դաշտ և տարածել իրենց գիտելիքները ու փորձը համայնքի ներսում:

- **Արդյունքների ներկայացման ավարտական միջոցառում**, որտեղ երիտասարդ մասնակիցները կկիսվեն իրենց՝ տեղեկատվական արշավների իրականացման փորձառությամբ՝ դժվարությունների և ձեռքբերումների մասին, կստանան ավարտական վկայականներ և կնախաձեռնեն միջմարզային համագործակցությանն ուղղված նոր մեդիա նախագծեր:

Ծրագրի մեկնարկը կլինի 2021 թվականի հոկտեմբերի 15-ին և Նախարարության ֆինանսավորման մասով կավարտվի 2021 թվականի դեկտեմբերի 15-ին:
Ծրագրի վերջնական ավարտը կլինի 2022 թվականի մարտի 1-ին:

Հ/Հ	Գործողություն	Պատասխանատու	Ամիս					
			1	2	3	4	5	6
1	**Ծրագրի նախապատրաստական աշխատանքների սկիզբ՝** 1. Ծրագրի ղեկավարման, ֆինանսական և հաղորդակցության ընդհանուր ռազմավարության պլանավորում: 2. Աշխատանքային պայմանագրերի պատրաստում: 3. Դասընթացավարների հետ ուսումնական պլանի ադապտացում: 4. Ծրագրի գնահատման համար նախատեսված գործիքների մշակում:	Ծրագրի համակարգող՝ Նելլի Փայտյան Ծրագրի հաշվապահ՝Հայկ Խաչատրյան	X					
2	Դասընթացի նախապատարսատում և մեկնարկ՝ 1. Դասընթացավարների հետ ուսումնական մոդուլների մշակում: 2. Ծրագրի լոգիստիկ կազմակերպչական աշխատանքների վերջնականացում: 3. Մասնակիցների կանչ, կանչի տարածում	Ծրագրի համակարգող՝ Նելլի Փայտյան Ծրագրի հաշվապահ՝Հայկ Խաչատրյան		X				

	համագործակից կողմերի հետ միասին: 4. Մասնակիցների ընտրություն և կապի հաստատում:							
3	Դասընթացի մեկնարկ և իրականացում՝ 1. Մասնակիցների տեղափոխում դեպի ծրագրի վայր: 2. 7-օրյա դասընթացի մեկնարկ և տեսանելիության ուղղված զուգահեռ աշխատանք: 3. Դասընթացի գնահատում և արդյունքների ամփոփում: 4. Մասնակիցների 3-ամսյա մենթորության մոդուլի մեկնարկ:	Ծրագրի համակարգող՝ Նելլի Փայտյան Ծրագրի հաշվապահ՝Հայկ Խաչատրյան		X	X			
4	Ծրագրի բովանդակային և ֆինանսական հաշվետվությունների կազմում և ներկայացում:	Ծրագրի համակարգող՝ Նելլի Փայտյան Ծրագրի հաշվապահ՝Հայկ Խաչատրյան			X			
5	Համայնքային տեղեկատվական արշավների նախագծում՝ 1. Տեղեկատվական 3 արշավների նախագծում: 2. Արշավների գնահատում, վերլուծություն և արդյունքների ներկայացում: 3. Վկայականների հանձնում և ծրագրի փակում:	Ծրագրի համակարգող՝ Նելլի Փայտյան Ծրագրի հաշվապահ՝Հայկ Խաչատրյան				X	X	X

Ծրագրի շահառուները և շահագրգիռ կողմերը

Ծրագիրը նպատակ ունի ներգարվել 18-30 տարեկան Սյունիքի, Գեղարքունիքի և Տավուշի մարզերում բնակվող 20 ակտիվ երիտասարդների, երիտասարդ առաջնորդների և երիտասարդական աշխատողների, ովքեր մոտիվացված կլինեն ծրագրում ձեռք բերած գիտելիքները ներդնել իրենց համայնքներում՝ կազմակերպելով մեդիագրագիտությանը, կիբեռգրագիտությանը և թվային գրագիտությանը ուղղված 3 և ավելի տեղեկատվական արշավներ:

Ձգտելու ենք ընդգրկել հավասար թվով մասնակիցներ Հայաստանի բոլոր 3 թիրախային մարզերից՝ ապահովելով հավասար և ներառառական մոտեցում բոլոր դիմորդների համար: Պոտենցիալ մասնակիցները պետք է շահագրգռված լինեն թվային գրագիտության, մեդիագրագիտության և կիբեռգրագիտության թեմաների շուրջ զարգացնել իրենց կարողությունները և 7-օրյա դասընթացից հետո առցանց տեղեկատվական արշավների միջոցով պայքարել ապատեղեկատվության դեմ:

Մասնակիցները կընտրվեն բաց կանչի միջոցով՝ հիմնվելով դիմում-հայտերում նկարագրած իրենց հետաքրքրության, տեղեկատվական արշավների նախաձեռնման իրենց նախնական գաղափարների հիման վրա, նաև իրենց համայնքներում այդ արշավների իրականացման մոտիվացիայի:

Մասնակիցներին ընտրելու և իրենց հետ հետագա՝ մարզային աշխատանքները համակարգելու նպատակով կհամագործակցենք մեր՝ այս մարզերում աշխատող 3 գործընկեր կազմակերպությունների հետ՝ «Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն» հասարակական կազմակերպություն, Կայուն զարգացման նախաձեռնությունների Աստղացոլք ՀԿ, «Վիններթ Հայաստան կանանց ռեսուրս կենտրոնների ցանց» Սյունիքի 4 քաղաքներում՝ Գորիս, Կապան, Մեղրի, Սիսիան, ինչպես նաև մարզային ինֆոտների և համալսարանների հետ, որպեսզի այս կառույցների աջակցությամբ ծրագրի մասնակիցները կարողանան իրականացնել իրենց տեղեկատվական արշավները:

Ռիսկերի գնահատում

Ծրագրի հիմանական ռիսկերը կապված են համավարակի հնարավոր ալիքի տարածման հետ, որը կարող է ընդհատել կամ ստիպել տեղափոխել ծրագրի համար նախատեսված ժամանակահատվածը այլ՝ ավելի ուշ ժամանակահատվածի:

Մենք նախատեսել ենք նաև ծրագրի առցանց իրականացման ֆորմատ, եթե նման ռիսկ լինի այն ժամանահատվածում, երբ պետք է իրականացվի ծրագրի դասընթացը:

Ռիսկերից մեկը դիտարկում ենք նաև այս մարզերի սահմանագծերում հնարավոր ռազմական գործողությունները, որոնք մեծապես ազդում են բնակչության հոգեբանական վիճակի վրա, երիտասարդների ակտիվությունը նվազում է, հետևաբար նաև մասնակցությունը տարբեր կրթական ծրագրերին:

Նկատվում է նաև գենդերային դիսբալանս, հատկապես պատերազմից հետո տղա մասնակիցները ավելի քիչ են կարողանում մասնակցել՝ պայմանավորված զինակոչով, կամավորագրմամբ և այլ հանգամանքներով:

Հաշվի առնելով վերնոշյալը մենք պատրաստ ենք տեղափոխել կամ փոփոխել դասընթացի իրականացման ժամկետները՝ առավելագույնս հարամարեցնելով մեր շահառուների կարիքներին:

Ծրագրի աշխատակազմը

Ծրագրում ներգրավված են ծրագրի ղեկավարը և կազմակերպության հաշվապահը, ինչպես նաև 5 դասընթացավարներ, որից միայն 3-ն են վճարվելու տվյալ ծրագրով, իսկ մյուսների ծառայությունների վճարը համաֆինանսավորվելու է:

Ծրագրի ղեկավար Նելլի Փայտյանը ունի տեղական և միջազգային կրթական ծրագրեր ղեկավարելու 10-ամյա փորձ, որի շրջանակներում վերջին մի քանի տարիների ընթացքում ղեկավարել է մեդիային և ակտիվիզմին նվիրված 2 ձմեռային ակադեմիա և 1 դպրոց, կազմակերպել մասնակիցների համար նախատեսված մենթորության մոդուլներ՝ կազմելով ծրագրերի ուսումնական պլանները դասընթացավարների հետ միասին՝ անմիջականորնեն ղեկավարելով կազմակերպության մեդիա արտադրության բոլոր գործընթացները:

Ծրագրի հաշվապահ Հայկ Խաչատրյանը վարում է կազմակերպության հաշվապահությունը՝ աշխատելով տեղական և միջազգային ծրագրերի հաշվապահության և ֆինանսական զեկույցների կազման վրա:

Դասընթացում ներգրված է մեդիագրագիտության և փաստերի ստուգման առարկայի դասընթացավար՝ Արշալույս Բարսեղյանը, ով փաստահավաք, փաստեր քննող և ստուգող լրագրող է, աշխատում է Մեդիա նախաձեռնությունների կենտրոնում և Media.am-ում: Վարում է դասընթացներ մեդիագրագիտության և փաստերի ստուգման թեմաներով, ինչպես նաև վարել է մեր կազմակերպության Մեդիա 2 ակադեմիաների և 1 դպրոցի մեդիագրագտիտություն առարկան և հրապարակել է մի շարք վերլուծական հոդվածներ Media.am-ի «Ստուգված է» խորագրի ներքո:

Կիբերգրագիտության դասընթացը վարելու է դասընթացավար Արթուրը Պապյանը՝ տեղեկատվական տեխնոլոգիաների եւ մեդիա ոլորտի խորհրդատու, Ազատության ռադիոկայանի լրագրող, կիբերգրագիտության փորձագետ, Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտի հայաստանյան ծրագրերի համակարգող: Արթուրը նույնպես նախկինում համագործակցել է մեզ հետ՝ վարելով դասընթացներ տեղեկատվական անվտանգության և թվային գրագիտությանն վերաբերյալ թե՛ ՀԿ աշխատակիցների, թե՛ ՀԿ շահառուների համար:

Լիլիթ Բրոյանը թվային տեխնոլոգիաների, թվային մարքեթինգի մասնագետ է և դասավանդելու է Թվային գործիքների միջոցով տեղեկատվական և իրազեկման արշավների կազմակերպում թեման: Վարում է eduCrush Յութուբյան ալիքը և անցկացնում թվային մարքեթինգի դասընթացներ:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN ը/կ	Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող ծրագրի						
	անվանումը	**բովանդակությունը**	**Կազմակերպության կողմից կատարման ենթակա գործառույթների նկարագիրը**	**ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները**	**Միջոցառման իրականացման վերջնաժամկետը**	**Հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը**	**Պահանջվող գումարը (դրամ)**
1	Ծրագրի նախապատրաստական փուլ	Ծրագրի ղեկավարման, ֆինանսական և հաղորդակցության ընդհանուր ռազմավարության պլանավորում: Աշխատանքային պայմանագրերի պատրաստում: Ուսումնական պլանի մշակում: Ծրագրի գնահատման համար նախատեսված գործիքների մշակում:	Ծրագրի նապապատրաստում, ծրագրի թիմի կազմավորում և ուսումնական պլանի մշակում:	Կնքված աշխատանքային պայմանագրերի առկայություն: Մշակված ուսումնական պլանի առկայություն:	Հոկտեմբերի 15, 2021	Հոկտեմբերի 20, 2021	300,000
2	Ծրագրի վերաբերյալ Տեղեկատվության և իրազեկման բարձրացման տեղեկատվական արշավի անցկացում: Մասնակիցների ընտրություն:	Ծրագրի մեկնարկին կսկսվի իրազեկության բարձրացման արշավ՝նպատակային լսարանին և շահագրգիռ կողմերին տեղեկացնելու ծրագրի	Տեղեկատվական արշավի իրականացում Մասնակիցների ընտրություն: Դիմորդների հայտերի վերլուծություն՝ նախապես մշակված	Առնվազն 100 մասնակցության հայտերի ստացում: Առնվազն 2 հրապարակում ծրագրի մասին: Դիմորդների հայտերի վերլուծություն և ընտրություն:	Հոկտեմբերի 20, 2021	Նոյեմբերի 1, 2021	300,000

		նպատակների, պլանավորված գործունեության և բոլոր արդյունքների վերաբերյալ:	չափանիշների հիման վրա:				
3	7-օրյա դասընթացի մեկնարկ և տեսանելիության ուղղված զուգահեռ աշխատանք:	Մեկշաբաթյա դասընթաց, որն իր շուրջը կհամախմբի Տավուշի, Գեղարքունիքի և Սյունիքի խոշորացված համայնքներում և սահմանամերձ գյուղական բնակավայրերում ապրող 18-30 տարեկան 20 երիտասարդների:	Դասընթացի անցկացում, որի ընթացքում մասնակիցները ոչ-ֆորմալ կրթական գործիքակազմի, ինտերակտիվ դասընթացների և 2 ուսումնական այցերի միջոցով կստանան գիտելիքներ և համապատասխան փորձառություն մեդիագրագիտության, փաստերի ստուգման, անձնական տվյալների պաշտպանության, կիբեռանվտանգության, սոցիալական մեդիայից գրագետ օգտվելու և ժամանակակից թվային գործիքների օգտագործման ձևերի, ինչպես նաև տեղեկատվական արշավների	Մասնակիցների կողմից ստորագրված ցանկ: Դասընթացի օրակարգ: Մասնակիցների գնահատման և հետադարձ կապի թերթիկների լրացում:	Նոյեմբերի 1, 2021	Դեկտեմբերի 5	1,000,000

			կազմակերպման ոլորտներում:				
	Ընդամենը՝ 1,600.000						
	ԱԱՀ՝ 320.000						
	Ընդամեն՝ 1,920.000						

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732
Պատվիրատուի ստորագրությունը
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝
Վահրամ Գասպարյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ

ՀԿ ք.Երևան, 0019 Բաղրամյան 45
apy@apy.am
Հայէկոնոմբանկ ԲԲԸ, Սպանդարյան մ/ճ, Հ/Հ 163048802066
ՀՎՀՀ 02247522

ՀԿ-ի ղեկավար՝
Գրիգոր Երիցյան

/ստորագրություն/

Կ.Տ.

15.10.2021 ԵՔԴՄ- 07

Հավելված 2
ծածկագրով
դրամաշնորհային մրցույթի հրավերի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Դրամաշնորհառու **«Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ**

Ծրագրի անուն **«Եղի՛ր տեղեկացված. մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբեռգրագիտության խթանում Տավուշի, Գեղարքունիքի և Սյունիքի երիտասարդների շրջանում»**

ՀՀ	Բյուջեի տողի նկարագրական	Միավոր	Միավորի քանակ	Միավորի արժեք (ՀՀ դրամ)	Պահանջվող գումար (ՀՀ դրամ)	Համաֆինանսավորվող գումարը (ՀՀ դրամ)	Ընդհանուր Պահանջվող և Համաֆինանսավորվող գումարները
	Աշխատավարձ						
Ա1	**Ծրագրի աշխատակազմի աշխատավարձ**						
1.1	Ծրագրի ղեկավար	ամիս	2	130.000	260.000	80.000	340.000
1.2	Հաշվապահ	ամիս	2	120.000	240.000	20.000	260.000
Ընդամենը Ա					**500.000**		
Բ	**Ծրագրային ծախսեր**						
2.1	Դասընթացավարներ (5 անձ x 7 օր)	Օր/անձ	35	3.500	100.000	22.500	122.500
2.2	Փորձագետներ (2 մենթորներ x 2 ամիս)	ամիս	2	100.000	200.000	100.000	300.000
2.3	Դասընթացի մասնակիցների կացություն Երևան քաղաքում (20 մասնակից, 5 դասընթացավար x 7 օր)	Օր/անձ	175	20.000	600.000	2.900.000	3.500.000
2.4	Դասընթացի մասնակիցների սնունդ Երևան քաղաքում (20 մասնակից, 5 դասընթացավար x 7 օր)	Օր/անձ	175	3000	0	525.000	525.000
2.2	Ճանապարհածախս (20 մասնակից, միջինում 200 կմ)	կմ	4000	100	200.000	200.000	400.000
Ընդամենը Բ					**1.100.000**		
Ընդամենը					**1.600.000**	**3.847.500**	5.447.500
ԱԱՀ					**320.000**		
ԸՆԴԱՄԵՆԸ					**1.920.000**		

Դրամաշնորհառու **«Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ**

Ծրագրի անուն **«Եղի՛ր տեղեկացված. մեդիագրագիտության, թվային գրագիտության և իբեռգրագիտության խթանում Տավուշի, Գեղարքունիքի և Սյունիքի երիտասարդների շրջանում»**

ՀՀ	Բյուջեի տեսակը	Պահանջվող գումարը (ՀՀ դրամ)	Բյուջեի տողի նկարագրական
	Աշխատավարձ		
Ա1	**Ծրագրի աշխատակազմի աշխատավարձ**		
1.1	Ծրագրի ղեկավար	700.000	6 ամիս աշխատավարձ x 130.000 / Գումարի մի մասը համաֆինանսավորվում է դիմող կազմակերպության կողմից:

	Հաշվապահ	700.000	6 ամիս աշխատավարձ x 120.000 / Գումարի մի մասը համաֆինանսավորվում է դիմող կազմակերպության կողմից:
1.400.000	Ընդամենը Ա		
Բ	Ծրագրային ծախսեր		
2.1	Դասընթացավարներ	100.000	5 անձ x 7 օր Գումարի մի մասը համաֆինանսավորվում է դիմող կազմակերպության կողմից:
2.2	Փորձագետներ	300.000	2 մենթորներ x 2 ամիս / Գումարի մի մասը համաֆինանսավորվում է դիմող կազմակերպության կողմից:
2.3	Դասընթացի մասնակիցների կացություն Երևան քաղաքում	600.000	20 մասնակից, 5 դասընթացավար x 7 օր x 20.000 դրամ / Գումարի մի մասը համաֆինանսավորվում է դիմող կազմակերպության կողմից:
2.4	Դասընթացի մասնակիցների սնունդ Երևան քաղաքում	0	20 մասնակից, 5 դասընթացավար x 7 օր / Գումարը ամբողջությամբ համաֆինանսավորվում է դիմող կազմակերպության կողմից:
2.5	Ճանապարհածախս	200.000	20 մասնակից, միջինում 200 կմ / գնառաջարկ չի ներկայացվում, քանի որ նախատեսվում է օգտվել բացառապես հանրային տրանսպորտից Սյունիքի, Գեղարքունիքի,Տավուշի համայնքներում/
1.200.000	Ընդամենը Բ		
Ընդամենը		1.600.000	
ԱԱՀ		320.000	
ԸՆԴԱՄԵՆԸ		1.920.000	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732
Պատվիրատուի ստորագրությունը
Գլխավոր քարտուղարի պարտականությունները
կատարող՝
Վահրամ Գասպարյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Հայ առաջադեմ
երիտասարդություն» ՀԿ
ք.Երևան, 0019 Բաղրամյան 45
apy@apy.am
Հայէկոնոմբանկ ԲԲԸ, Սպանդարյան մ/6,
Հ/Հ 163048802066 ,ՀՎՀՀ 02247522
ՀԿ-ի ղեկավար՝
Գրիգոր Երիցյան

/ստորագրություն/

Կ.Տ.